ԲԱՋՄԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԴԻԱՅՈՒՄ. «ՈՒՐԻՇԻ ԽՈՍՔԻ» ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ 10 ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՕՆԼԱՅՆ ԶԼՄ-ՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Երեւան 2022

Զեկույցը պատրաստվել է «Նոր մեդիա միջավայր, նոր խնդիրներ, նոր կարգավորումներ. հանուն Հայաստանում բազմակարծիք, որակյալ եւ թափանցիկ մեդիայի» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական հիմնադրամ հանուն ժողովրդավարության (EED) կազմակերպության ֆինանսական աջակցությամբ: Զեկույցի բովանդակությունը կարող է չհամընկնել EED-ի տեսակետների հետ: Տեղեկատվության եւ կարծիքների համար պատասխանատու է «Ռեգիոն» հետազոտական կենտրոնը:

Մեթոդաբանությունը եւ արդյունքների վերլուծությունը՝ **Լաուրա Բաղդասարյան**
Մոնիտորինգի թիմ՝ **Մարինե Սարգսյան, Մարիամ Սիրունյան, Տիգրան Բաղդասարյան, Հրանտ Գալստյան, Գագիկ Խաչատրյան**
Տվյալների մշակումը, գրաֆիկները՝ **Շողիկ Ստեփանյան**

Ծրագրի նյութերն այստեղ՝ **Mediametrics-** **https://www.regioncenter.info/hy/media-metrics**

«Ռեգիոն» հետազոտական կենտրոն

European Endowment for Democracy (EED)

Բազմակարծությունը Հայաստանի մեդիայում. «ուրիշի խոսքի» ներկայացման առանձնահատկություններ

(Հայաստանի 10 հեռուստաընկերությունների եւ օնլայն ԶԼՄ-ների մոնիտորինգի արդյունքներ)

Տարածված կարծիք կա, որ Հայաստանի մեդիան հատկապես 2020թ. ղարաբաղյան պատերազմում կրած կորուստների հետեւանքով առավել բեւեռացվեց, բացեիբաց հարելով քաղաքական մրցակից ուժերին ու քարոզելով նրանց պնդումները: Նման ընդհանրական կարծիք հայտնողների շարքերում են նաեւ խորհրդարանական ինստիտուցիոնալ (իշխանական եւ ընդդիմադիր) ուժերի ներկայացուցիչները, որոնք մատնացույց են անում մրցակից ուժերին սատարող լրատվամիջոցներում իրողությունները միակողմանի, քաղաքական նպատակահարմարության հիմքով, մանիպուլյացիոն հնարքներով ներկայացնելու նրանց ձեռագիրը:

Գաղտնիք չէ, որ այսօր Հայաստանում գործող ԶԼՄ-ների մի մասը փաստացի ղեկավարում են կամ քաղաքական տարբեր ուժերի անդամները, կամ նրանց մերձավոր շրջանակները: Բայց մեդիա դաշտում կա նաեւ մի հատված, որի մասին նման միանշանակ պնդումներ անելու հիմք չկա: Ֆորմալ առումով, երբ անգամ վառ արտահայտված քաղաքական նախապատվություններ դրսեւորող ԶԼՄ-ները բացեիբաց չեն հայտնում իրենց քաղաքական կողմնորոշումների կամ պատկանելության մասին, խնդրահարույց է դառնում նաեւ մեդիան կամ որպես իշխանամետ, կամ՝ ընդդիմադիր տեսակավորելը:

Սակայն կա մեդիայի բեւեռացվածության օբյեկտիվ ընդհանրական ցուցիչ՝ բազմակարծությունը: Այն կարող է դրսեւորվել ինչպես առանձին լրատվամիջոցներում, այնպես էլ մեդիադաշտում իր ամբողջության մեջ: Բազմակարծությունը դրսեւորվում է նախեւառաջ ԶԼՄ-ներում տեղ գտած «ուրիշի խոսքի» առկայությամբ, այն չափորոշիչով, թե հանրային նշանակալի (այդ թվում, այլ երկրներում տեղի ունեցող) գործընթացները լուսաբանելու ընթացքում ո՞ւմ խոսքն է, բացի լրատվամիջոցների ներկայացուցիչներից, շրջանառվում լրատվամիջոցներում եւ որքա՞ն ինտենսիվ է դա արվում:

Մենք նախաձեռնեցինք այս ուսումնասիրությունը, պարզելու համար, թե՝

- **Կա՞ բազմակարծություն Հայաստանի մեդիադաշտի առավել շատ սպառվող երկու հատվածում՝ հեռուստատեսությունում եւ օնլայն ԶԼՄ-ներում:**
- **Ինչպե՞ս եւ ո՞ր հարցերում է այն դրսեւորվում:**
- **Արդյո՞ք ԶԼՄ հարթակ բերված «ուրիշի խոսքի» առատությունը վկայում է այդ լրատվամիջոցում բազմակարծության առկայության, եւ հակառակը, ավելի քիչ քանակի «ուրիշի խոսքն» ավտոմատ վեր է ածվում ԶԼՄ-ում բազմակարծության բացակայության ցուցիչի:**

Այս հարցերին պատասխանելու համար հետազոտել ենք Հայաստանի 5 հեռուստաընկերությունների (Հանրային ՀԸ, «5-րդ ալիք», «Կենտրոն» ՀԸ, «Երկիր Մեդիա» ՀԸ, «Ֆրինյուզ» ՀԸ) ու 5 օնլայն ԶԼՄ-ների (1in.am, Freenews.am, Hraparak.am, Factor.am, Civilnet.am) մեկ ամսվա (10.04-10.05, 2022թ.) նյութերը:

Մեթոդաբանական ուղեցույց

ԶԼՄ-ների ընտրությունը

Բոլոր ԶԼՄ-ներն ընտրվել են երկու հիմնական չափանիշներով.

- Օնայն ԶԼՄ-ներ եւ հեռուստաընկերություններ, որոնք ունեն իշխանական եւ ընդդիմադիր քաղաքական ուժերի հետ տարբեր առնչություններ, կամ նրանց նկատմամբ տարբեր տրամադրվածություն/նախապատվություն են դրսեւորում,

- Օնլայն ԶԼՄ-ներ, որոնք բացի տեքստային նյութերից մեծ ծավալի տեսանյութեր են շրջանառում՝ դրանք լսարաններին ներկայացնելով հաղորդաշարերի, ուղիղ միացմամբ ռեպորտաժների, լրատվական հաղորդումների միջոցով:

Հաղորդումների/նյութերի ընտրությունը

- **Օնլայն ԶԼՄ-ների դեպքում** ուսումնասիրել ենք հասարակական-քաղաքական թեմաներով օրվա բոլոր նյութերը, անկախ դրանց շրջանառման ձեւաչափերից (միայն տեքստային, միայն/ կամ նաեւ՝ տեսանյութի ձեւաչափ), անկախ դրանց ժանրից (ռեպորտաժներ «դեպքի» վայրից, տաղավարային հարցազրույցներ ու բանավիճային հաղորդումներ եւ այլն): Նյութեր, որտեղ մեջբերված է «ուրիշի խոսքը»: Այս շարքին ենք դասել նաեւ օնլայն ԶԼՄ-ներում հրապարակվող սոցցանցային նյութերը, որպես այդ հարթակ բերված «ուրիշի խոսք»:

- **Հեռուստաընկերությունների դեպքում** ուսումնասիրության համար ընտրել ենք օրվա լրատվական հաղորդումների, հիմնական թողարկումները (որտեղ գլխավորապես ռեպորտաժներ են հեռարձակվում), ինչպես նաեւ հասարակական-քաղաքական թեմաներով հարցազրույցների/բավավիճային ձեւաչափի հաղորդաշարերը, որտեղ ներկայացվել /մեջբերվել է Հայաստանում ու այլ երկրներում, տարածաշրջաններում հասարակական-քաղաքական զարգացումների ու իրադարձությունների մասին «ուրիշի խոսքը»:

Հաշվարկի սկզբունքը

- Նյութերը բաժանել ենք երկու խմբի՝ **ռեպորտաժային եւ տաղավարային**: **Տաղավարային նյութեր** պայմանական խմբում դասել ենք հարցազրույցի/քննարկման ժանրի բոլոր նյութերը/հաղորդումները, անկախ այն բանից, դա տեղի է ունեցել խմբագրության տաղավարո՞ւմ, թե՞ զրուցակցի աշխատավայրում, լսարաններին զրույցը ներկայացվել է ուղիղ հեռարձակվող տեսանյութի՞, թե՞ միայն տեքստի միջոցով: **Ռեպորտաժային նյութեր** պայմանական խմբին ենք դասել բոլոր ոչ հարցազրույցի ժանրի նյութերը, որոնցում կա «ուրիշի խոսք», այդ թվում՝ ռեպորտաժներն օրվա լրատվությամբ, որտեղ կան հարցազրույցի էլեմենտներ (կարճատեւ հարցուպատասխան): Այսպես, օրինակ, տաղավարային նյութ ենք համարել 1in.am-ի բոլոր առանձին հարցազրույցները, որոնց մի մասը ներկայացվում է միայն տեքստի, մյուս մասը՝ օնլայն միացման, իսկ երրորդ մասը՝ հենց խմբագրության տաղավարում ընթացող զրույցի տեսքով: Տաղավարային ենք համարել նաեւ, օրինակ, «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության մի շարք հարցազրույցները, որոնք այդ

հեռուստաընկերության լրագրողները վարել են ընդդիմադիր ուժերի բողոքի փողոցային ակցիաների ընթացքում, իրենց բացօթյա տաղավար հրավիրելով տարբեր գործիչների:

- **Հեռուստաընկերությունների լրատվական հաղորդումների** դեպքում 1 նյութ ենք համարել միայն հասարակական-քաղաքական թեմաներով սյուժեները, բաց թողնելով սպորտային եւ եղանակային տեսության նյութերը: Հարցազրույցների/բանավիճային ձեւաչափի հաղորդումների դեպքում 1 նյութ ենք համարել դրանց ամբողջական թողարկումները, «Որքան թողարկում, այդքան նյութ» սկզբունքով:

- **Օնլայն ԶԼՄ-ների արտադրանքն** ուսումնասիրելիս նյութերը դասդասել ենք նույն սկզբունքով. բոլոր տեքստային եւ տեսանյութի ձեւաչափի առանձին հարցազրույցները համարել ենք տաղավարային նյութեր, մնացած դեպքում նյութերը համարել ենք ռեպորտաժներ: Այս շարքին ենք դասել նաեւ սոցցանցային արտատպությունները, որպես տարբեր գործիչների ու մասնագետների «ուրիշի խոսք»:

- 1 նյութում այս կամ այն գործչի, մասնագետի, այլ երկրի ներկայացուցիչների կարծիքների շրջանառման ինտենսիվությունը չափել ենք «1 նյութում 1 կոնկրետ անուն» սկզբունքով: Օրինակ, եթե 1 նյութում ներկայացվել են միեւնույն N քաղաքական ուժ ներկայացնող 2 տարբեր գործիչների կարծիքներ, ապա մենք դա հաշվարկել ենք որպես N քաղաքական ուժի խոսքի 2 անգամ ներկայացում:

- Թեմաների ինտենսիվությունը չափել ենք՝ ելնելով դրանց հղումներ անող «ուրիշների» քանակից: Օրինակ, եթե 1 նյութում միեւնույն թեման մեկնաբանել են 2 տարբեր (քաղաքական, հասարակական, այլ) խմբերի ներկայացուցիչներ, ապա այդ թեման հաշվարկել ենք 2 անգամ:

«Ուրիշի խոսքի» ծավալներն ու ներկայացման ձեւերը

Որքա՞ն շատ ուրիշի կարծիքներ են շրջանառվում օնլայն ԶԼՄ-ներում եւ հեռուստաընկերություններում: Ինչպե՞ս են գերազանցապես դրանք ներկայացվում լսարաններին:

Այս հարցերի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ հետազոտված բոլոր լրատվամիջոցները լայնորեն շրջանառում են «ուրիշների» կարծիքներն ու խոսքը եւ ռեպորտաժներում (մեջբերումներ, կարճատեւ հարցուպատասխան), եւ տաղավարային առանձին հարցազրույցների/ բանավեճերի նյութերում: Կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ մեդիայում «ուրիշի խոսքին» հղումների, ուրիշի խոսքի ամբողջական շրջանառման պակաս չկա: Սակայն ԶԼՄ-ներում էապես տարբեր է ռեպորտաժային եւ տաղավարային նյութերում այս կամ այն քաղաքական ու սոցիալական շրջանակների խոսքի հարաբերակցությունը:

Այսպես, կան օնլայն ԶԼՄ-ներ, որոնք ինտենսիվ, ամենօրյա ռեժիմով կիրառում են տաղավարային հարցազրույցների պրակտիկան: Նման ձեռագիր կա 1in.am-ում, Factor.am-ում, Civilnet.am-ում: Այս լրատվամիջոցների «ուրիշի խոսք» պարունակող մեկ ամսվա նյութերի 33% -ը, 17%-ը, 15%-ը կազմել են տաղավարային հարցազրույցներ/քննարկումները: Այս ԶԼՄ-ների տաղավարային նյութերի ակնհայտ մեծամասնությունը տեսանյութերի ձեւաչափի են:

1in.am -ի մեկ ամսվա ընթացքում կազմակերպած 323 հարցազրույցների ընթացքում ելույթ են ունեցել 340 գործիչներ ու մասնագետներ, որոնց խոսքը կազմել է հրապարակած «ուրիշի խոսքի» ողջ զանգվածի 27%-ը: Սա հետազոտված բոլոր ԶԼՄ-ների շարքում առավելագույն տվյալ է: Մյուս հարցազրույցների/քննարկումների ձեւաչափով բավական ակտիվ աշխատած ԶԼՄ-ն Factor.am-ն է, որի 167 այս կարգի հաղորդումներում խոսք են ունեցել 206 հյուրեր (շրջանառած «ուրիշի խոսքի» ողջ զանգվածի 17%):

Ուրիշի խոսքի վերարտադրման մեծ ծավալներ են արձանագրվել նաեւ Freenews.am եւ Hraparak.am լրատվամիջոցներում: Սակայն այս դեպքում այն շրջանառվել է գլխավորապես ռեպորտաժային ժանրի նյութերի միջոցով (Freenews.am - 99%, Hraparak.am - 96%):

Տես ստորեւ բերված գրաֆիկը, նաեւ՝ Հավելված, Աղյուսակ 1:



Բոլոր 5 հեռուստաընկերություններն ունեն տաղավարային հարցազրույցի/քննարկման ձեւաչափի հաղորդումներ: Մեկ ամսվա ընթացքում հրավիրված գործիչների ու մասնագետների հետ մյուսներից շատ հարցազրույցներ կազմակերպել է Հանրային ՀԸ իր այդ ժանրի 6 հաղորդաշարերի միջոցով: «Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ», «Հարցազրույց Աստղիկ Սարգսյանի հետ», «Լուրեր Հարցազրույց», «Բաց հարթակ», «Տարբեր կարծիքներ Աննա Դանիելյանի հետ», «Հանրային քննարկում» հաղորդումների թողարկումներում եթեր են հեռարձակվել 110 հյուրերի ելույթները:

Այս ցուցանիշով երկրորդ տեղում «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունն է, որը մեկ ամսվա ընթացքում 56 անձի հետ է հարցազրույց հեռարձակել իր այդ ձեւաչափի «Երկրի հյուրասրահ» եւ «Երկիրն այսօր» լրատվական հաղորդումների ընթացքում:

«5-րդ ալիք» հեռուստաընկերությունը նույն ձեւաչափի իր 4 հաղորդաշարերով («Հարցազրույց», «Օրագիր», «Դեմ դիմաց», «Սինթեզ») կազմակերպել է 51 հարցազրույց եւ քննարկում:

Բոլորից քիչ քանակի տաղավարային հարցազրույցներ/քննարկումներ են ունեցել Կենտրոն ՀԸ, որի այդ ժանրի երեք հաղորդումների եթերում («Press կենտրոն», «30 րոպե Միքայել Մելքումյանի հետ», «Առանց կարծրատիպերի») ելույթ են ունեցել 30 հյուրեր եւ «Ֆրինյուզ» ՀԸ (հիմնականում իր «Ազատ զրույց» հաղորդումով)՝ 26 հարցազրույց:

Կենտրոն եւ Ֆրինյուզ հեռուստաընկերությունների եթերում «ուրիշի խոսքը» գերազանցապես հեռարձակվել է լրատվական հաղորդումների ռեպորտաժային ձեւաչափի նյութերի միջոցով:

Տես ստորեւ բերված գրաֆիկը, ինչպես նաեւ՝ Հավելված, Աղյուսակ 2:



Ո՞ւմ խոսքն է շրջանառվել եւ ինչպե՞ս

Այս հարցի առաջին եւ միանշանակ պատասխանն այն է, որ մեդիայի մի հատվածի քաղաքական տրոհվածությունը դրսեւորվում է նախեւառաջ հարցազրույց/քննարկումների ժանրի նյութերում, այդպիսով ի ցույց դնելով հենց այդ ուժի, հենց այդ կարծիքներն ունեցող մասնագետների ու սոցիալական այլ խմբերի ներկայացուցիչների դիրքորոշումներն իրենց հարթակների միջոցով լսարաններին ներկայացնելու ձեռագիրը: Չնայած, որ ռեպորտաժային նյութերում «ուրիշի խոսքի» շրջանառումը հիմնականում պայմանավորված է օրվա իրադարձություններով, քաղաքական վառ արտահայտված նախապատվություններով ՁԼՄ-ներում նաեւ ռեպորտաժային նյութերում է երեւում նախընտրելի քաղաքական թիմերի ներկայացուցիչների էապես ավելի շատ խոսքը մյուսների համեմատ: Սակայն կան նաեւ ՁԼՄ-ներ, որոնց հարթակներում նման ակնհայտ խզվածքներ չեն դրսեւորվում:

Այս տեսանկյունից պետք է խոսել ոչ թե մեկ առանձին ՁԼՄ-ում, այլ հետազոտված բոլոր 10 լրատվամիջոցներում միաժամանակ դրսեւորվող բազմակարծության մասին:

Քաղաքական հիմքով ՁԼՄ-ների ակնհայտ խմբավորման պայմաններում «ուրիշի խոսքի» հեղինակների ցանկի մեծությունը ավտոմատ չի վկայում տվյալ ՁԼՄ-ում տարբեր, հակադիր կարծիքների առկայության մասին, հակառակը, ի ցույց է դնում կոնկրետ դիրքորոշման ավելի ինտենսիվ քարոզչությունը:

Սոցցանցային բովանդակություններն օնլայն ՁԼՄ-ներում կիրառելու մասին մեր նախորդ հետազոտության ժամանակ արձանագրել ենք, որ մեդիան ընտրում է տարբեր օգտատերերի գրառումներն ու դրանք իր հարթակներում շրջանառում է՝ հիմնականում ելնելով քաղաքական նպատակահարմարությունից: Պարզ ասած, իշխանության քայլերը ճիշտ համարող օգտատերերի գրառումները որպես կանոն հայտնվում են իշխանամետ ՁԼՄ-ներում, եւ հակառակը, այդ նույն քայլը բոլորովին ուրիշ տեսանկյունից դիտարկող ու քննադատող օգտատերերի գրառումները տեղ են գտնում ընդդիմադիր մամուլում[1]:

[1] Տես «Սոցցանցային նյութերի կիրառման առանձնահատկությունները Հայաստանի օնլայն ՁԼՄ-ներում – 2022», էջ 9-13, https://www.regioncenter.info/hy/media-metrics/1871

Նույն սկզբունքը գործում է նաեւ սեփական արտադրության նյութերում:

Եւ իշխանամետ, եւ ընդդիմադիր լրատվամիջոցներում քաղաքական նախապատվությունները դրսեւորվում են ոչ միայն հարցազրույցի ժանրի նյութերում (երբ այս կամ այն խնդիրը մեկնաբանելու համար տաղավար են հրավիրվում կոնկրետ ուժերի ներկայացուցիչներ ու համահունչ կարծիքներ ունեցող մասնագետներ, այլ խմբերի ներկայացուցիչներ), այլեւ օրվա իրադարձությունների մասին ռեպորտաժներում (երբ միեւնույն միջոցառման, միջադեպի, իրադարձության մասին նյութում իշխանամետ մեդիան հղում է անում/մեջբերում է իշխանական ներկայացուցիչների խոսքը, իսկ ընդդիմադիր մեդիան՝ ընդդիմության ներկայացուցիչների ելույթները): Չնայած, որ ռեպորտաժային նյութերում տեղ գտած պաշտոնական տեղեկատվություն հնչեցնողների, «ուրիշի խոսքի» այլ հեղինակների (քաղաքական ուժերի, սոցիալական ու մասնագիտական խմբերի, ոչ քաղաքական գերատեսչությունների/բիզնես ընկերությունների, սովորական քաղաքացիների եւ այլոց) ցանկն ընդարձակ է հետազոտված բոլոր ԶԼՄ-ներում:

Տվյալների ավելի մանրամասն պատկերն այսպիսին է:

1in.am-ի նյութերում ընդհանուր առմամբ շրջանառվել է 18 տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչների խոսքը: Սակայն, իշխանական Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ներկայացուցիչների խոսքը բոլորից շատ անգամ է մեջբերվել/հրապարակվել: Իսկ խորհրդարանական ընդդիմադիր Հայաստան եւ Պատիվ ունեմ խմբակցությունների ներկայացուցիչների կարծիքները լսարաններին այս ԶԼՄ-ի միջոցով հասել է հիմնականում ռեպորտաժային բնույթի նյութերի միջոցով (այսինքն՝ մասնակիորեն):

1in.am-ի հարցազրույցների շարքում բոլորից շատ անգամ խոսք են ունեցել իշխանական Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ներկայացուցիչները (18), Սփյուռքի (39), Արցախի ներկայացուցիչները (24): Ընդդիմադիր Հայաստան եւ Պատիվ ունեմ խմբակցությունների անդամները մեկ ամսվա ընթացքում այս ԶԼՄ-ին հարցազրույց են տվել 1-ական անգամ:

Միակ ոչ իշխանական քաղուժը, որի անդամները մնացած բոլոր ընդդիմադիր քաղուժերի համեմատ ամենից շատ անգամ են հարցազրույց ունեցել այս ԶԼՄ-ում, «Հանուն

հանրապետության» կուսակցությունն է (10 հարցազրույց): Մյուս արտախորհրդարանական ընդդիմադիր ուժերը հարցազրույցներ են ունեցել 1-6 անգամ:

Freenews.am-ում տեղ է գտել 11 տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների խոսքը, ակնհայտ մեծամասնությամբ՝ ռեպորտաժային նյութերում: Եթե մի կողմ թողնենք պետական կառույցների ներկայացուցիչների ելույթները, որոնք ամենից շատ անգամ են շրջանառվել այս հարթակում, ապա երկրորդ տեղում Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ներկայացուցիչներն են եղել, որոնք խոսել են այս հարթակի ռեպորտաժային նյութերում բոլոր քաղուժերից էապես ավելի շատ անգամ («ուրիշի խոսքի» 14%): Մնացած 10 ընդդիմադիր քաղուժերի (այդ թվում՝ խորհրդարանական երկու ընդդիմադիր խմբակցությունների) ներկայացուցիչների ելույթները Freenews.am-ը հրապարակել է տասնապատիկ անգամ քիչ:

Hraparak.am -ում հակառակ պատկերն է: Այստեղ ընդհանուր առմամբ հրապարակվել է 21 տարբեր քաղաքական ուժերի խոսքը: Սակայն թե ռեպորտաժային նյութերում, թե տաղավարային հարցազրույցներում ամենից շատ անգամ շրջանառվել է Հայաստան խմբակցության խոսքը: Այս ընդդիմադիր կառույցի ներկայացուցիչները 12 հարցազրույցներ են ունեցել Hraparak.am-ում: Մնացած քաղուժերը հարցազրույցներ են ունեցել 1-ական անգամ:

Factor.am-ի նյութերում համեմատաբար ավելի փոքր է քաղաքական տարբեր հայացքներով ուժերի ներկայացուցիչների խոսքի միջեւ ճեղքվածքը: Այստեղ ընդհանուր առմամբ հրապարակվել են 19 տարբեր քաղուժերի կարծիքներ: Չնայած, որ Factor.am-ում նույնպես բոլորից շատ անգամ հարցազրույցներ/քննարկումներ են եղել իշխանական ՔՊ-ի ներկայացուցիչների հետ (28 հարցազրույց), սակայն մյուսների համեմատ ավելի շատ են եղել նաեւ ինստիտուցիոնալ ընդդիմության՝ Հայաստան խմբակցության (9 հարցազրույց) եւ Պատիվ ունեմ խմբակցության անդամների (4) հարցազրույցները: Կան էլի 15 կուսակցություններ, որոնց ներկայացուցիչները այս ԶԼՄ-ի հարթակ հարցազրույցի/քննարկման են հրավիրվել 1-4 անգամ:

Civilnet.am-ի տաղավարային եւ ռեպորտաժային նյութերում մեջբերվել կամ հնչել է 7 քաղաքական ուժերի ներկայացուցիչների խոսքը: Չնայած մյուս օնլայն ԶԼՄ-ների համեմատ քաղուժերի ցանկի այս փոքրությանը, որեւէ քաղաքական ուժի ներկայացուցիչ մյուսներից էականորեն ավելի շատ տաղավարային հարցազրույցներ չի ունեցել: Սակայն ռեպորտաժային նյութերում բոլորից շատ անգամ մեջբերվել է ՔՊ-ի խոսքը օրվա լրատվության շրջանակներում:

Հանրային հեռուստաընկերության հաղորդաշարերում հնչել է հայաստանյան 16 տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչների խոսքը: Դրանցից ամենից շատ անգամ ներկայացվել են իշխանական ՔՊ-ի անդամների կարծիքները: Ընդ որում՝ 1/4 մասը (25%) հանդես է եկել առանձին հարցազրույցների/քննարկումների ձեւաչափով հաղորդումներում: Խորհրդարանական ընդդիմադիր երկու ուժերի անդամների կարծիքներն ավելի շատ ներկայացվել են ռեպորտաժային նյութերում, քան առանձին հարցազրույցների միջոցով: Հանրային ՀԸ տաղավարներ հարցազրույցների/քննարկումների համար հրավիրված մյուս ուժերի ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունը Հայաստան եւ Պատիվ ունեմ խմբակցությունների փողոցային բողոքի մեկ ամսից ավելի տեւած ակցիային չմիացած քաղուժեր են եղել՝ ԼՀԿ, Հանուն հանրապետության, Հանրապետություն, Ապրելու երկիր, Արդար Հայաստան, ՀԱԿ, Քաղաքացու որոշում, Հայաստանի քրիստոնեա-ժողովրդավարական եւ այլ կուսակցություններ:

«5-րդ ալիք» ՀԸ հեռարձակել է 10 տարբեր քաղուժերի ներկայացուցիչների կարծիքները, որոնցից բոլորից շատ ռեպորտաժային նյութերում եւ տաղավարային հարցազրույցների/քննարկումների հաղորդումներում հեռարձակվել են խորհրդարանական ընդդիմադիր երկու ուժերի՝ Հայաստան խմբակցության (բոլոր մեջբերումների/ելույթների 23%) եւ Պատիվ ունեմ խմբակցության (բոլոր մեջբերումների/ելույթների 14%) ներկայացուցիչների խոսքը: Տաղավարային հարցազրույցների հրավիրված քաղաքական ուրիշ ուժերից են եղել Զարթոնք, 5165, Քաղաքացու որոշում կուսակցությունների 1-ական ներկայացուցիչներ: Իշխանական ՔՊ կուսակցության ներկայացուցիչների խոսքը հեռարձակվել է միայն ռեպորտաժային նյութերում:

Կենտրոն ՀԸ եթերում հնչել է 10 քաղաքական ուժերի ներկայացուցիչների խոսքը, որոնց ճնշող մեծամասնությունը հեռարձակվել է ռեպորտաժային ձեւաչափի նյութերում, օրվա լրատվության շրջանակներում: Հարցազրույց/քննարկումների ձեւաչափի հաղորդաշարերում 3-ական անգամ ելույթ են ունեցել Պատիվ ունեմ խմբակցությունն ու Լուսավոր Հայաստան կուսակցությունը, 1-ական անգամ՝ Հայաստան խմբակցությունը, Ռեֆորմիստների կուսակցությունը, Հայ կառուցողական կուսակցությունը, Ապրելու երկիր կուսակցությունը:

Երկիր Մեդիա ՀԸ եթերում հնչել է 8 տարբեր քաղուժերի խոսքը: Ուրիշներից մեծ տարբերությամբ բոլորից շատ անգամ այս հեռուստաընկերության լսարաններին հասել է փողոցային բողոքի կազմակերպիչներից Հայաստան խմբակցության անդամների խոսքը:

Այդպես է եղել եւ ռեպորտաժներում, եւ հարցազրույցի ժանրի հաղորդման ժամանակ (բոլոր ելույթների/մեջբերումների 38%), այնուհետեւ հնչել է Պատիվ ունեմ դաշինքի ներկայացուցիչների խոսքը՝ (բոլոր ելույթների/մեջբերումների 4%): Ընդամենը 1% է կազմել իշխանական ՔՊ-ի ներկայացուցիչների խոսքը, որը միայն ռեպորտաժային նյութերում է հեռարձակվել: Հարզացրույցի հրավիրված հյուրերի ակնհայտ մեծամասնությունը Հայաստան խմբակցության մաս կազմող ՀՅԴ կուսակցության անդամներն են եղել:

Ֆրինյուզ ՀԸ եթերում հնչել է 6 քաղաքական ուժերի խոսքը, որոնցից առավելագույն անգամ այս հեռուստաընկերությունը իր լսարաններին ներկայացրել է իշխանական ՔՊ-ի անդամների խոսքը (բոլոր ելույթների/մեջբերումների 23%): Բացի այս ուժից հեռուստաընկերության «Ազատ զրույց» հաղորդմանը հարցազրույցի են հրավիրվել Քրիստոնեա- ժողովրդավարական եւ Հանրապետություն կուսակցությունների ներկայացուցիչները: Այս ուժերը չեն մասնակցել ընդդիմության փողոցային բողոքի ակցիաներին: Մնացած 3 կուսակցությունների ներկայացուցիչների խոսքը հնչել է ռեպորտաժային նյութերում, օրվա լրատվության համատեքստում:

Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ քաղաքական նախապատվությունները եւ օնլայն ԶԼՄ-ներում, եւ հեռուստաընկերություններում արտահայտվում են նաեւ տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչների դեպքում: Ըստ էության ինչպես եւ սոցիալական ցանցերում, կարծիքների բախումներ տեղի են ունենում տարբեր ԶԼՄ հարթակների միջեւ, այլ ոչ թե միեւնույն ԶԼՄ-ի նյութերում:

Այսպես,

- Առանց բացառության բոլոր 10 ԶԼՄ-ներում շրջանառվել է նաեւ սովորական քաղաքացիների խոսքը: Սակայն իշխանամետ ԶԼՄ-ներում մեջբերվում են քաղաքացիների՝ ընդդիմությանը քննադատող խոսքը, եւ հակառակը՝ ընդդիմադիր լրատվամիջոցներում մեջբերվում են իշխանություններին պիտակավորող քաղաքացիների խոսքը:
- Հաճախ բանավիճային բնույթի հաղորդումները վերածվում են միակողմանի քննարկումների, եւ տարբեր կարծիքների հնչեցման հարթակ չեն դառնում, քանի որ ըստ էության բանավեճի տաղավարում ելույթ են ունենում ոչ բեւեռային հայացքներով մասնակիցները:
- Միեւնույն հեռուստաընկերության բանավիճային ձեւաչափի տարբեր

հաղորդումներին իրար մոտ կամ նույն թեմաներով մեկ ամսվա ընթացքում կարող է հրավիրվել նույն գործիչը, փորձագետը, ՀԿ ներկայացուցիչը, վերլուծաբանը եւ այլն : Սա դրսեւորվում է մի շարք հեռուստաընկերություններում (Հանրային ՀԸ, Ֆրինյուզ ՀԸ, Երկիր Մեդիա ՀԸ), ու մի քանի օնլայն ԶԼՄ-ներում: Օրինակ, մենք արձանագրել ենք 18 փորձագետների ու վերլուծաբանների, որոնք մեկ ամսվա ընթացքում 1in.am-ի տաղավարում հարցազրույց են ունեցել 3 -6 անգամ: Factor.am-ում նման օրինակներն ավելի քիչ են (7 փորձագետներ այս ԶԼՄ-ի տաղավար են հրավիրվել կարծիք հայտնելու համար 2-3 անգամ, չնայած այս դեպքում դրանք հիմնականում տարբեր ձեւաչափի հաղորդումներ են եղել՝ առանձին հարցազրույցներ եւ քննարկումներ նաեւ ուրիշ մասնագետների մասնակցությամբ: Մնացած օնլայն ԶԼՄ-ներում նման դրսեւորումներն ավելի քիչ են եղել:

Ավելի մանրամասն տես՝ Հավելված, Աղյուսակներ 3, 4, 5, 6:

Երրորդ առանձնահատկությունն այն է, որ՝

- անկախ թեմաներից, նկարագրվող գործընթացների աշխարհագրությունից (տեղի են ունենում դրանք Հայաստանում, Արցախում, թե այլ երկրներում), հետազոտված բոլոր ԶԼՄ-ներում շրջանառվել է գերազանցապես Հայաստանի ներկայացուցիչների խոսքը:
- օնլայն ԶԼՄ-ներում Արցախի եւ Սփյուռքի ներկայացուցիչների խոսքն ավելի շատ է շրջանառվել, քան հեռուստաընկերությունների ռեպորտաժներում եւ հարցազրույցների ժանրի հաղորդումներում: Արցախի եւ Սփյուռքի ներկայացուցիչները մեծ մասամբ ելույթ են ունեցել հարցազրույցների ձեւաչափով:
- այլ երկրների ներկայացուցիչների խոսքը բոլոր ԶԼՄ-ների պարագայում շրջանառվել է գերազանցապես ռեպորտաժային նյութերում, որպես օրվա լուր, արտասահմանյան լրատվական աղբյուրներին հղումներով:

Չորրորդ առանձնահատկությունն այն է, որ այլ երկրների, Արցախի ու Սփյուռքի ներկայացուցիչների խոսքի ծավալները տարբեր ԶԼՄ-ներում էապես տարբեր են:

Այսպես, օրինակ, 1in.am-ը հրապարակել է Սփյուռքի ներկայացուցիչների գրեթե նույնքան կարծիք, որքան այս ԶԼՄ-ից օրվա ընթացքում էականորեն ավելի քիչ նյութեր արտադրող Civilnet.am-ն է հրապարակել (համապատասխանաբար՝ 5% եւ 4%): Արցախի ներկայացուցիչների կարծիքներն առավելագույն անգամ նույնպես հրապարակվել են Civilnet.am-ում («ուրիշի խոսքի» 7%):

Մյուսներից ավելի շատ անգամ այլ երկրների ներկայացուցիչների հայտարարությունները ռեպորտաժային նյութերում շրջանառել են Freenews.am-ը (34%) եւ Factor.am-ը (21%):

Հեռուստաընկերություններում Սփյուռքի, Արցախի, այլ երկրների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների խոսքը շրջանառվել է գրեթե համաչափ, եւ ինչպես օնլայն ԶԼՄ-ների պարագայում է, ակնհայտ մեծամասնությամբ ռեպորտաժային բնույթի նյութերի միջոցով:

Տես ստորեւ բերված գրաֆիկները:





Ինչի՞ մասին է եղել «ուրիշի խոսքը»

Առաջին առանձնահատկությունն այն է, որ հետազոտության մեկ ամսվա ընթացքում տեղի ունեցած գործընթացների ու իրադարձությունների բերումով մեդիայի ուշադրության առանցքում եղել են գլխավորապես ղարաբաղյան հակամարտության/անվտանգության/բանակի եւ ներքաղաքական խնդիրները: Այլ երկրներում տեղի ունեցող կարեւորագույն գործընթացներին ու իրադարձություններին ԶԼՄ-ներն անդրադարձել են գերազանցապես օրվա լրատվության, այլ ոչ թե առանձին հարցազրույց-քննարկումների միջոցով: Առանձին լրատվամիջոցներում այլ երկրների մասին կազմակերպված հատուկ հարցազրույցների քանակը միեւնույն է չի փոխում այս ընդհանուր պատկերը:

Այս հետազոտության մեկ ամիսը մի կողմից դիվանագիտական հանդիպումների, իսկ մյուս կողմից՝ ներքաղաքական եւս մի սրացման փուլ էր, որը դրսեւորվեց ընդդիմադիր ուժերի սկզբում խորհրդարանում, ապա՝ փողոցում բողոքի ակցիաներով, ցուցարարների ու իրավապահ մարմինների միջեւ բախումներով:

Այսպես, արտաքին ասպարեզում հայ-ռուսական միջպետական հարաբերությունների 30-ամյակի առիթով Մոսկվայում երկու երկրների ղեկավարները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որտեղ նշված էր համագործակցության լայն սպեկտր, այդ թվում՝ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման համատեքստում (19.04), տեղի ունեցավ ՀՀ ԱԳ նախարարի այցն ԱՄՆ (2-6.05), սպասվում էր ԵՄ-ի միջնորդությամբ ՀՀ եւ Ադրբեջանի ղեկավարների երկրորդ հանդիպումը Բրյուսելում (22.05): Բոլոր այս հանդիպումները ակնհայտ լարվածությամբ էին ընկալում ոչ միայն ընդդիմադիր ուժերը, հատկապես Փաշինյանի ԱԺ-ում ելույթից հետո (13.04), որի ընթացքում նա հայտարարեց, որ միջազգային հանրությունը հորդորում է «մի փոքր իջեցնել կարգավիճակի նշաձողը» Ղարաբաղյան խնդրում: Ըստ էության ընդդիմության փողոցային ակցիաները ընդլայնվեցին հենց այս ելույթից հետո:

Մեր հետազոտության ժամանակ շարունակվում էր ռուս-ուկրաինական պատերազմը, Ֆրանսիայում տեղի ունեցան նախագահական ընտրություններ:

Հաշվի առնելով այս հանգամանքները, միանգամայն սպասելի էր, որ հետազոտված բոլոր ԶԼՄ-ների կազմակերպած հարցազրույցների/քննարկումների առանցքում Ղարաբաղյան հակամարտության համատեքստն ու դրա հետ կապված ընդդիմության բողոքի ակցիաների թեմաներն էին լինելու:

Սակայն տարբեր ԶԼՄ-ներում այս երկու թեմաները տարբեր ինտենսիվություն ու փոխկապվածություն են ունեցել:

Այսպես, ավելի շատ Ղարաբաղյան հակամարտության, քան ընդդիմության փողոցային ակցիաների մասին են եղել 1in.am-ի, Freenews.am-ի, Factor.am-ի, Civilnet.am-ի հարցազրույցները:

Այս երկու խնդիրները մեկը մյուսի հետ փոխկապակցմամբ է ներկայացրել Hraparak.am-ն իր հարցազրույցներում:

Բոլոր օնլայն ԶԼՄ-ներում ռուս-ուկրաինական պատերազմի թեման քննարկվել է ավելի քիչ անգամ, քան վերը նշված խնդիրները Իսկ Freenews.am-ում այնքան անգամ քիչ, որքան ընդդիմության բողոքի ակցիաների թեմաներն են եղել:

Պատկերը փոքր-ինչ այլ է հեռուստաընկերությունների պարագայում:

Ընդդիմադիր «5-րդ ալիք», «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունների եւ իշխանամետ «Ֆրինյուզ» հեռուստաընկերության կազմակերպած հարցազրույցներում ու քննարկումների ժանրի հաղորդումներում ընդդիմության բողոքի ակցիաներին անդրադարձներ են եղել նույնքան/կամ գրեթե նույնքան, որքան Ղարաբաղյան հակամարտության հետպատերազմյան իրողություններին: Ռուս-ուկրաինական պատերազմի՝ Հայաստանի, Ղարաբաղյան հակամարտության վրա հնարավոր ազդեցությունների մասին բոլորից շատ անգամ խոսվել է Հանրային եւ Ֆրինյուզ հեռուստաընկերությունների տաղավարային հարցազրույցներում/քննարկումներում:

Տես ստորեւ բերված գրաֆիկները:





Կան ուրիշ թեմաներ եւ խնդիրներ, որոնք չնայած վերը նշված հարցերի ինտենսիվությանը, նույնպես քննարկվել են հետազոտված ԶԼՄ-ների հարցազրույցների/քննարկումների ժամանակ (տնտեսական, իրավական/դատական համակարգի հարցեր, միգրացիա, սոցիալական հարցեր, կյանքը հետպատերազմյան Արցախում եւ այլն):

Տես ստորեւ բերված գրաֆիկները, ինչպես նաեւ՝ Հավելված, Աղյուսակներ 7, 8:


Օնլայն ԶԼՄ-ների հարցազրույցներում քննարկված թեմաներ
1in.am
32%
4%
19%
25%
Տնտեսական;5%
15%
Freenews.am
37.5%
12.5%
12.5%
12.5%
Տնտեսական;12.5%
13%
Hraparak.am
45%
6%
32%
3.5%
5%
9%
Factor.am
35%
8%
21%
7%
8%
21%
Civilnet.am
22%
9%
11%
10%
Տնտեսական; 12%
36%
Ղարաբաղյան հակամարտություն/անվտանգություն/բանակ
Ռուս-ուկրաինական պատերազմ
ՀՀ ներքին խնդիրներ
Արտաքին քաղաքական խնդիրներ
Իրավական/դատական խնդիրներ
Այլ թեմաներ



Երկրորդ առանձնահակությունն այն է, որ այլ երկրներում տեղի ունեցող նշանակալի իրադարձությունների մասին հարցազրույցներում նույնպես գերազանցապես խոսել են Հայաստանի ներկայացուցիչները: Այլ երկրների գործիչները, մասնագետները քիչ են երեւում հայաստանյան ԶԼՄ-ների հարցազրույցների ժամանակ: Այլ երկրների հետ կապված գործընթացները մեկնաբանելու են հրավիրվում նաեւ Սփյուռքի ներկայացուցիչները: Սակայն նման դեպքերը շատ չեն: Սփյուռքի ներկայացուցիչների հետ հարցազրույցները հիմնականում Սփյուռքի թեմաներով են ընթանում՝ հայապահպանություն, կրթություն եւ այլ հարցեր:

Այսպես, 10 ԶԼՄ-ներից միայն 1in.am-ն է դրսեւորել հանրային նշանակության հարցերում այլ երկրների ներկայացուցիչների հետ հարցազրույցներ կազմակերպելու կայուն ձեռագիր: Դա առավելապես դրսեւորվել է ռուսաստանցի վերլուծաբանների ու այլ մասնագետների հետ հարցազրույցների պարագայում: Մեկ ամսվա ընթացքում 1in.am-ում կազմակերպվել է 15 հարցազրույց Ռուսաստանի ներկայացուցիչների հետ, որոնց մեծ մասը մեկնաբանել է Ղարաբաղյան ներկայիս խնդիրներն ու հայ-ադրբեջանական հետպատերազմյան գործընթացները:

Մնացած ԶԼՄ-ներում կամ այլ երկրների ներկայացուիցչների հետ այս թեմայով ընդհանրապես հարցազրույցներ չեն կազմակերպվել, կամ՝ եղել է 1 (Civilnet.am), 2 (Factor.am) տաղավարային հարցազրույց: Հայաստանի հեռուստաընկերությունները, այդ թվում՝ Հանրային ՀԸ, կենտրոնացած են եղել իրենց հարցազրույցներում երկու խնդիրներ՝ Ղարաբաղյան հակամարտությունն ու ընդդիմության բողոքի ակցիաները հայաստանյան հյուրերի մասնակցությամբ մեկնաբանելու վրա:

Ռուս-ուկրաինական պատերազմի թեման բոլոր հեռուստաընկեություններում լուսաբանվել է գերազանցապես ռեպորտաժային բնույթի նյութերում, տարբեր կողմերի արած հայտարարությունների հնչեցմամբ:

Շատ քիչ քանակի հարցազրույցներ են կազմակերպվել ռուս-ուկրաինական պատերազմի թեմայով հենց այդ երկրների ներկայացուցիչների հետ: Պատերազմի թեման բոլոր ԶԼՄ-ներում գերազանցապես ռեպորտաժային բնույթի, օրվա լրատվության համատեքստում է շոշափվել այս պատերազմում մասնակցող տարբեր երկրների հայտարարությունների մեջբերումներով: Ռուս-ուկրաինական պատերազմի թեմայով հարցազրույցների հրավիրված հյուրերի շարքում գերազանցապես Հայաստանի ներկայացուցիչներ են եղել, որոնք խոսել են Հայաստանի ու Արցախի վրա պատերազմի ազդեցության տարբեր հնարավոր սցենարների մասին (Արցախում հետպատերազմյան ստատուս-քվոյի, տնտեսական, քաղաքական ու այլ առումներով):
Հատկանշական է նաեւ, որ տարբեր երկրներում տեղի ունեցող իրադարձությունների ու գործընթացների հարցում հայաստանյան մեդիան ավելի շատ դիմում է այդ երկրներում Սփյուռքի ներկայացուցիչներին կարծիքներ ներկայացնելու խնդրանքով, քան ասենք տարբեր վերլուծաբաններին ու քաղաքական, պաշտոնական շրջանակներին:

Օրինակ, նույն ռուս-ուկրաինական պատերազմի հարցերով եղել են հարցազրույցներ Ուկրաինայի հայազգի բնակիչների հետ, Ֆրանսիայում անցած նախագահական ընտրությունների առիթով եղել են հարցազրույցներ ֆրանսահայ գործիչների հետ:

Տես ստորեւ բերված գրաֆիկները:


Օնլայն ԶԼՄ-ներում կարծիք հայտնած Ռուսաստանի ներկայացուցիչների քանակ
1in.am
20
15
Freenews.am
92
0
Hraparak.am
33
0
Factor.am
49
0
Civilnet.am
21
1
Ռեպորտաժ
Տաղավարային հարցազրույց


Հեռուստաընկերություններում կարծիք հայտնած Ռուսաստանի ներկայացուցիչների քանակ
Հանրային ՀԸ
57
1
5-րդ ալիք ՀԸ
35
0
Կենտրոն ՀԸ
35
0
Երկիրմեդիա ՀԸ
21
0
Ֆրինյուզ ՀԸ
21
0
Ռեպորտաժ
Տաղավարային հարցազրույց


Հեռուստաընկերություններում կարծիք հայտնած Ուկրաինայի ներկայացուցիչների քանակ
Հանրային ՀԸ
5-րդ ալիք ՀԸ
Կենտրոն ՀԸ
Երկիրմեդիա ՀԸ
Ֆրինյուզ ՀԸ
35
0
21
0
3
0
6
0
2
0
Ռեպորտաժ
Տաղավարային հարցազրույց


Օնլայն ԶԼՄ-ներում կարծիք հայտնած Ուկրաինայի ներկայացուցիչների քանակ
1in.am
Freenews.am
Hraparak.am
Factor.am
Civilnet.am
44
3
45
0
16
0
52
2
4
0
Ռեպորտաժ
Տաղավարային հարցազրույց

ՀԱՎԵԼՎԱԾ

Աղյուսակ 1.Հետազոտված նյութերի քանակը, տեսակը, «ուրիշի խոսքի» ինտենսիվությունը օնլայն ՁԼՄ-ներում (10.04-10.05, 2022)

Օնլայն ՁԼՄ-ներ	Հետազոտված նյութերի քանակ	Նյութերի տեսակ				Ուրիշի խոսք	Այդ թվում՝			
		Հարցազրույց/ քննարկում տաղավարում		Ռեպորտաժ			ՁԼՄ-ի տաղավարում		ՁԼՄ-ի ռեպորտաժում	
1in.am	976	323	33%	653	67%	1247	340	27%	907	73%
Freenews.am	895	6	1%	889	99%	972	6	1%	966	99%
Hraparak.am	1279	56	4%	1223	96%	1643	59	4%	1584	96%
Factor.am	984	167	17%	817	83%	1241	206	17%	1035	83%
	271	40	15%	231	85%	526	46	9%	480	91%
Ընդամենը	**4405**	**592**	**13%**	**3813**	**87%**	**5629**	**657**	**12%**	**4972**	**88%**

Աղյուսակ 2. Հետազոտված նյութերի քանակը, տեսակը, «ուրիշի խոսքի» ինտենսիվությունը հեռուստաընկերություններում
(10.04-10.05, 2022)

Հեռուստաընկերություններ/ հաղորդումներ	Թողարկումների քանակ	Նյութերի քանակ	Նյութերի տեսակ				Ուրիշի խոսք				
			Հարցազրույց/ քննարկում տաղավարում		Ռեպորտաժ		ՁԼՄ-ի տաղավարում		ՁԼՄ-ի ռեպորտաժում		Ընդամենը
Հանրային ՀԸ											
Լուրեր	27	317	0	0%	317	100%	0	0%	894	100%	894
Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ	20	20	20	100%	0	0%	21	100%	0	0%	21
Հարցազրույց Աստղիկ Սարգսյանի հետ	18	18	18	100%	0	0%	18	100%	0	0%	18
Լուրեր Հարցազրույց	10	10	10	100%	0	0%	10	100%	0	0%	10
Տարբեր կարծիքներ Աննա Դանիելյանի հետ	13	13	13	100%	0	0%	26	100%	0	0%	26
Բաց հարթակ	15	15	15	100%	0	0%	15	100%	0	0%	15
Հանրային քննարկում	5	5	5	100%	0	0%	20	100%	0	0%	20
Ընդամենը	**108**	**398**	**81**	**20%**	**317**	**80%**	**110**	**11%**	**894**	**89%**	**1004**
5-րդ ալիք ՀԸ											
Հայլուր	31	362	1	0%	361	100%	1	0%	759	100%	760
Դեմ դիմաց	3	3	3	100%	0	0%	6	100%	0	0%	6
Օրագիր	20	20	20	100%	0	0%	20	100%	0	0%	20
Հարցազրույց	22	22	22	100%	0	0%	22	100%	0	0%	22
Սինթեզ	2	2	2	100%	0	0%	2	100%	0	0%	2
Ընդամենը	**78**	**409**	**48**	**12%**	**361**	**88%**	**51**	**6%**	**759**	**94%**	**810**
Կենտրոն ՀԸ											
Էպիկենտրոն	28	189	0	0%	189	100%	0	0%	545	100%	545
30 րոպե Միքայել Մելքումյանի հետ	4	4	4	100%	0	0%	11	100%	0	0%	11
Առանց կարծրատիպերի	3	3	3	100%	0	0%	3	100%	0	0%	3
Press կենտրոն	4	4	4	100%	0	0%	16	100%	0	0%	16
Ընդամենը	**39**	**200**	**11**	**5%**	**189**	**95%**	**30**	**5%**	**545**	**95%**	**575**
Երկիրմեդիա ՀԸ											
Երկիրն այսօր	31	149	4	3%	145	97%	5	5%	339	95%	355

Երկրի հյուրասրահը	31	51	51	100%	0	0%	51	100%	0	0%	51
Ընդամենը	**62**	**200**	**55**	**27%**	**145**	**73%**	**56**	**16%**	**339**	**83%**	**406**
Ֆրինյուզ ՀԸ											
Ազատ լուրեր	31	277	4	1%	273	99%	4	1%	341	99%	345
Ազատ զրույց	22	22	22	100%	0	0%	22	100%	0	0%	22
Ընդամենը	**53**	**299**	**26**	**9%**	**273**	**91%**	**26**	**7%**	**341**	**93%**	**367**

Աղյուսակ 3. ՈՎ է խոսել օնլայն ԶԼՄ- ներում
(10.04-10.05, 2022)

ԶԼՄ	Հայաստան		Արցախ		Սփյուռք		Այլ երկրներ		Միջազգային կազմակերպութ.		Ընդամենը	
1in.am	935	75%	54	4%	57	5%	190	15%	11	1%	1247	100%
Freenews.am	579	60%	30	3%	1	0%	331	34%	31	3%	972	100%
Hraparak.am	1398	85%	89	5%	27	2%	122	7%	7	0%	1643	100%
Factor.am	901	73%	26	2%	10	1%	260	21%	44	4%	1241	100%
Civilnet.am	384	73%	37	7%	21	4%	76	14%	8	2%	526	100%
Ընդամենը	**4198**	**75%**	**236**	**4%**	**116**	**2%**	**978**	**17%**	**101**	**2%**	**5629**	**100%**

Աղյուսակ 4. ՈՎ է խոսել հեռուստաընկերություններում
(10.04-10.05, 2022)

Հանրային ՀԸ / Ով է խոսել	Լուրեր	Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ	Հարցազրույց Աստղիկ Սարգսյանի հետ	Լուրեր Հարցազրույց	Տարբեր կարծիքներ Աննա Դանիելյանի հետ	Բաց հարթակ	Հանրային քննարկում	Ընդամենը
Հայաստան	632	21	16	5	26	12	20	**732**
	71%	100%	89%	50%	100%	80%	100%	**73%**
Արցախ	23	0	0	0	0	0	0	**23**
	3%	0%	0%	0%	0%	0%	0%	**2%**
Սփյուռք	10	0	1	4	0	2	0	**17**
	1%	0%	6%	40%	0%	13%	0%	**2%**
Այլ երկրներ	191	0	1	0	0	1	0	**193**
	21%	0%	6%	0%	0%	7%	0%	**19%**
Միջազգային կազմակերպություն	38	0	0	1	0	0	0	**39**
	4%	0%	0%	10%	0%	0%	0%	**4%**
Ընդամենը	**894**	**21**	**18**	**10**	**26**	**15**	**20**	**1004**
	100%	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**

5-րդ ալիք ՀԸ/ Ով է խոսել	Հայլուր	Դեմ դիմաց	Օրագիր	Հարցազրույց	Սինթեզ	Ընդամենը
Հայաստան	592	6	19	22	2	641
	78%	100%	100%	96%	100%	79%
Արցախ	35	0	0	0	0	35
	5%	0%	0%	0%	0%	4%
Սփյուռք	13	0	0	1	0	14
	2%	0%	0%	4%	0%	2%
Այլ երկրներ	106	0	0	0	0	106
	14%	0%	0%	0%	0%	13%
Միջազգային կազմակերպություն	14	0	0	0	0	14
	2%	0%	0%	0%	0%	2%
Ընդամենը	**760**	**6**	**19**	**23**	**2**	**810**
	100%	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**

Կենտրոն ՀԸ / Ով է խոսել	Էպիկենտրոն	Press կենտրոն	30 րոպե Միքայել Մելքումյանի հետ	Առանց կարծրատիպերի	Ընդամենը
Հայաստան	443	16	11	2	472
	81%	100%	100%	67%	82%
Արցախ	16	0	0	1	17
	3%	0%	0%	33%	3%
Սփյուռք	4	0	0	0	4
	1%	0%	0%	0%	0.6%
Այլ երկրներ	80	0	0	0	80
	15%	0%	0%	0%	14%
Միջազգային կազմակերպություն	2	0	0	0	2
	0%	0%	0%	0%	0.3%
Ընդամենը	545	**16**	11	3	**575**
	100%	**100%**	**100%**	100%	**100%**

Երկիր Մեդիա ՀԸ **Ով է խոսել**	**Երկիրն այսօր**	**Երկրի հյուրասրահ**	**Ընդամենը**
Հայաստան	279	49	328
	79%	96%	81%
Արցախ	5	1	6
	1%	2%	1%
Սփյուռք	8	1	9
	2%	2%	2%
Այլ երկրներ	56	0	56
	16%	0%	14%
Միջազգային կազմակերպություն	7	0	7
	2%	0%	2%
Ընդամենը	**355**	**51**	**406**
	100%	**100%**	**100%**

Ֆրինյուզ ՀԸ/ **Ով է խոսել**	**Ազատ լուրեր**	**Ազատ զրույց**	**Ընդամենը**
Հայաստան	271	21	292
	78.6%	95.5%	79%
Արցախ	13	0	13
	3.8%	0.0%	4%
Սփյուռք	5	1	6
	1.4%	4.5%	2%
Այլ երկրներ	47	0	47
	13.6%	0.0%	13%
Միջազգային կազմակերպություն	9	0	9
	2.6%	0.0%	2%
Ընդամենը	**345**	**22**	**367**
	100%	**100%**	**100%**

Աղյուսակ 5. Հայաստանից ով է խոսել օնլայն ԶԼՄ-ներում (10.04-10.05, 2022)

1in.am Ով է խոսել		
Փորձագետ/ՀԿ ներկայացուցիչ	231	25%
Քաղաքացիական պայմանագիր կուս.	161	17%
Հայաստան խմբակցություն	107	11%
Քաղաքացի	92	10%
Պետական կառույց	69	7%
Ոչ պետական գերատեսչություն/ընկերություն	47	5%
Պատիվ ունեմ խմբակցություն	46	5%
ՏԻՄ	32	3%
ՀՀ վարչապետ	31	3%
Մշակութային գործիչ	25	3%
Հանուն հանրապետության կուս.	17	2%
Առանձին հաս./քաղ. գործիչ	14	2%
ՀՀ ՄԻՊ	13	1%
Հայ կառուցողական կուս.	8	1%
Քրիստոնեա-ժողովրդավարական կուս.	8	1%
5165 կուս.	5	1%
Արդար Հայաստան կուս.	4	0,4%
Ինքնիշխան Հայաստան կուս.	3	0,3%
Հանրապետություն կուս.	3	0,3%
Բարգավաճ Հայաստան կուս.	3	0,3%
Եկեղեցի	3	0,3%
Պահպանողական կուս.	3	0,3%
Հյա ազգային կոնգրես կուս.	2	0,2%
Լրագրող	2	0,2%
Ազգային ժողովրդավարական բեւեռ	1	0,1%
Ապրելու երկիր կուս.	1	0,1%
Քաղաքացու որոշում կուս.	1	0,1%
Հայաստանի դեմոկրատական կուս.	1	0,1%
Հայտնի անձանց ընտանիքի անդամ	1	0,1%
Հայաստանի կոմունիստական կուս.	1	0,1%
Ընդամենը	**935**	**100%**

Freenews.am **Ով է խոսել**		
Պետական կառույց	163	28%
Քաղաքացիական պայմանագիր կուս.	142	25%
ՀՀ վարչապետ	72	12%
Քաղաքացի	41	7%
ՏԻՄ	37	6%
Փորձագետ/ՀԿ ներկայացուցիչ	26	5%
Ոչ պետական գերատեսչություն/ընկերություն	23	4%
Մշակութային գործիչ	20	4%
Հայաստան խմբակցություն	13	2%
Պատիվ ունեմ խմբակցություն	11	2%
Եկեղեցի	7	1%
ՀՀ ՄԻՊ	6	1%
Հայտնի անձանց ընտանիքի անդամ	4	1%
Լրագրող	4	1%
Առանձին հաս./քաղ. գործիչ	2	0.3%
Հանուն հանրապետության կուս.	1	0.2%
Հանրապետություն կուս.	1	0.2%
Լուսավոր Հայաստան կուս.	1	0.2%
Բարգավաճ Հայաստան կուս.	1	0.2%
Հայ ազգային կուս.	1	0.2%
Քաղաքացու որոշում կուս.	1	0.2%
5165 կուս.	1	0.2%
Ուժը հայրենյաց կուս.	1	0.2%
Ընդամենը	**579**	**100%**

Hraparak.am **Ով է խոսել**		
Հայաստան խմբակցություն	280	20%
Քաղաքացի	263	19%
Փորձագետ/ՀԿ ներկայացուցիչ	221	16%
Պատիվ ունեմ խմբակցություն	207	14%
Առանձին հաս./քաղ. գործիչ	64	5%
Պետական կառույց	62	4%
Քաղաքացիական պայմանագիր կուս.	48	3%

Մշակութային գործիչ	45	3%
Ոչ պետական գերատեսչություն/ընկերություն	38	3%
5165 կուս.	28	2%
ՏԻՄ	25	2%
ՀՀ Վարչապետ	22	2%
Բարգավաճ Հայաստան կուս.	16	1%
Հայտնի անձանց ընտանիքի անդամ	10	0,7%
Լրագրող	10	0,7%
Հայ ազգային կոնգրես կուս.	9	0,6%
Եկեղեցի	9	0,6%
Զարթոնք կուս.	8	0,6%
ՀՀ ՄԻՊ	7	0,5%
Լուսավոր Հայաստան կուս.	5	0,4%
Հայաստանի դեմոկրատական կուս.	5	0,4%
Ապրելու երկիր կուս.	4	0,3%
Այլանս կուս.	2	0,1%
Ազգային ինքնորոշում միավորում կուս.	1	0,1%
Ազգային-ժողովրդավարական բեւեռ	1	0,1%
Երկիր ծիրանի կուս.	1	0,1%
Ազգային անվտանգություն կուս.	1	0,1%
Ազատություն կուս.	1	0,1%
Հայ կառուցողական կուս	1	0,1%
Դեմոկրատական այլընտրանք կուս.	1	0,1%
Միացյալ Հայաստան կուս.	1	0,1%
Ուժը հայրենյաց կուս.	1	0,1%
Վերածնունդ կուս.	1	0,1%
Ընդամենը	**1398**	**100%**

Factor.am		
Ով է խոսել		
Փորձագետ/ՀԿ ներկայացուցիչ	177	20%
Քաղաքացիական պայմանագիր կուս.	147	16%
Պետական կառույց	140	15%
Ոչ քաղաքական գերատեսչություն/ընկերություն	92	10%
Հայաստան խմբակցություն	81	9%
ՀՀ վարչապետ	67	7%
Քաղաքացի	55	6%
ՏԻՄ	41	5%
Պատիվ ունեմ խմբակցություն	23	3%
ՀՀ ՄԻՊ	15	1,7%
Առանձին հաս./քաղ. գործիչ	13	1,4%
Մշակութային գործիչ	11	1,2%

Հանուն հանրապետության կուս.	4	0,4%
Ազգային ժողովրդավարական բեւեռ	4	0,4%
Հայ կառուցողական կուս.	3	0,3%
Հայ ազգային կոնգրես կուս.	3	0,3%
Լրագրող	3	0,3%
ԼՀԿ	3	0,3%
Եկեղեցի	3	0,3%
5165 կուս.	3	0,3%
Հայաստանի եվրոպական կուս.	2	0,2%
Ինքնիշխան Հայաստան կուս.	2	0,2%
Արդար Հայաստան կուս.	2	0,2%
Քրիստոնեա-ժողովրդավարական կուս.	1	0,1%
Քաղաքացու որոշում կուս.	1	0,1%
Պահպանողական կուս.	1	0,1%
Հանրապետություն կուս.	1	0,1%
Հայաստանի դեմոկրատական կուս.	1	0,1%
Բարգավաճ Հայաստան կուս.	1	0,1%
Ապրելու երկիր կուս.	1	0,1%
Ընդամենը	**901**	**100%**

Civilnet.am **Ով է խոսել**		
Քաղաքացի	111	29%
Փորձագետ/ՀԿ ներկայացուցիչ	46	12%
Պետական կառույց	45	12%
ՀՀ Վարչապետ	37	9%
Քաղաքացիական պայմանագիր կուս.	29	7%
Ոչ պետական գերատեսչություն/ընկերություն	25	6%
Հայաստան խմբակցություն	30	8%
ՏԻՄ	16	4%
Պատիվ ունեմ խմբակցություն	22	6%
Լրագրող	9	2%
ՀՀ ՄԻՊ	4	1%
Առանձին հաս./քաղ. գործիչ	4	1%
5165 կուս.	3	0,8%
Հանրապետություն կուս.	1	0,3%
Հայ ազգային կոնգրես կուս.	1	0,3%
Ինքնիշխան Հայաստան կուս	1	0,3%
Ընդամենը	**384**	**100%**

Աղյուսակ 6. Հայաստանից ով է խոսել հեռուստաընկերություններում (10.04-10.05, 2022)

Հանրային ՀԸ/ Ով է խոսել	Լուրեր		Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ		Հարցազրույց Աստղիկ Սարգսյանի հետ		Լուրեր-Հարցազրույց		Տարբեր կարծիքներ Աննա Դանիելյանի հետ		Բաց հարթակ		Հանրային քննարկում		Ընդամենը	
Պետական կառույց	151	24%	2	10%	1	6%	2	40%	1	4%	4	33%	0	0%	161	22%
Փորձագետ/ՀԿ ներկայացուցիչ	104	16%	1	5%	3	19%	1	20%	10	38%	1	8%	12	60%	132	18%
Ոչ քաղաքական գերատեսչություն/ ընկերություն	117	18%	1	5%	2	13%	2	40%	0	0%	3	25%	2	10%	127	17%
Քաղաքացի	83	13%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	83	11%
Քաղաքացիական պայմանագիր կուս.	49	8%	6	29%	6	38%	0	0%	1	4%	3	25%	0	0%	65	9%
ՀՀ վարչապետ	34	5%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	34	5%
ՏԻՄ	33	5%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	33	5%
Հայաստան խմբակցություն	20	3%	1	5%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	21	3%
Պատիվ ունեմ խմբակցություն	9	1%	0	0%	0	0%	0	0%	3	12%	0	0%	0	0%	12	2%
ՀՀ ՄԻՊ	8	1%	1	5%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	9	1%
Մշակութային գործիչ	6	1%	1	5%	0	0%	0	0%	0	0%	1	8%	1	5%	9	1%
ՀՀ Նախագահ	9	1%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	9	1%
Լուսավոր Հայաստան կուս.	2	0%	2	10%	1	6%	0	0%	2	8%	0	0%	1	5%	8	1%
Առանձին հաս./քաղ. գործիչ	2	0%	2	10%	0	0%	0	0%	1	4%	0	0%	0	0%	5	1%
Հանրապետություն կուս.	1	0%	1	5%	0	0%	0	0%	1	4%	0	0%	0	0%	3	0.4%
Ապրելու երկիր կուս.	0	0%	1	5%	0	0%	0	0%	1	4%	0	0%	1	5%	3	0.4%
Հանուն հանրապետության կուս.	0	0%	0	0%	1	6%	0	0%	1	4%	0	0%	0	0%	2	0.2%
Արդար Հայաստան կուս.	0	0%	1	5%	0	0%	0	0%	1	4%	0	0%	0	0%	2	0.2%
Դեմոկրատական այլընտրանք կուս.	0	0%	0	0%	0	0%	0	0%	1	4%	0	0%	1	5%	2	0.2%
Եկեղեցի	2	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	2	0.2%

Ազգային փոքրամասնության ներկայացուցիչ	2	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	2	0.2%
Հայ ազգային կոնգրես կուս.	0	0%	1	5%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	1	0.1%
Քաղաքացու որոշում կուս.	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	1	5%	1	0.1%
5165 կուս.	0	0%	0	0%	1	6%	0	0%	0	0%	0	0%	0	0%	1	0.1%
Հայ կառուցողական կուս.	0	0%	0	0%	0	0%	0	0%	1	4%	0	0%	0	0%	1	0.1%
Հայաստանի քրիստոնեա-ժողովրդավարական կուս.	0	0%	0	0%	1	0%	0	0%	1	4%	0	0%	0	0%	2	0.2%
Ժողովրդավարական համախմբում կուս.	0	0%	0	0%	0	0%	0	0%	1	4%	0	0%	0	0%	1	0.1%
Հայաստանի եվրոպական կուս.	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	1	5%	1	0.1%
Ընդամենը	**632**	**100%**	**21**	**100%**	**16**	**100%**	**5**	**100%**	**26**	**100%**	**12**	**100%**	**20**	**100%**	**732**	**100%**

5-րդ ալիք ՀԸ / Ով է խոսել	**Հայլուր**		**Դեմ դիմաց**		**Հարցազրույց**		**Օրագիր**		**Սինթեզ**		**Ընդամենը**	
Քաղաքացի	187	32%	0	0%	0	0%	1	5%	0	0%	188	29%
Հայաստան խմբակցություն	141	24%	0	0%	3	14%	4	20%	0	0%	148	23%
Փորձագետ/ՀԿ ներկայացուցիչ	60	10%	3	50%	12	45%	13	65%	1	50%	89	14%
Պատիվ ունեմ խմբակցություն	52	9%	1	17%	3	14%	1	5%	0	0%	57	9%
Քաղաքացիական պայմանագիր կուս.	38	6%	0	0%	0	0%	0	0%	0	0%	38	6%
Պետական կառույց	32	5%	0	0%	0	0%	0	0%	0	0%	32	5%
ՀՀ վարչապետ	15	3%	0	0%	0	0%	0	0%	0	0%	15	2%
Մշակութային գործիչ	12	2%	0	0%	1	5%	1	5%	1	50%	15	2%
Ոչ քաղաքական գերատեսչություն/ ընկերություն	9	2%	0	0%	0	0%	0	0%	0	0%	9	1%
Զարթոնք կուս.	7	1%	0	0%	0	0%	0	0%	0	0%	7	1%
5165 կուս.	6	1%	1	17%	0	0%	0	0%	0	0%	7	1%
Առանձին հաս./քաղ. գործիչ	5	1%	0	0%	1	5%	0	0%	0	0%	6	1%
Լրագրող	5	1%	0	0%	1	5%	0	0%	0	0%	6	1%
ՀՀ ՄԻՊ	3	1%	0	0%	1	5%	0	0%	0	0%	4	1%
Եկեղեցի	4	1%	0	0%	0	0%	0	0%	0	0%	4	1%
ՏԻՄ	4	1%	0	0%	0	0%	0	0%	0	0%	4	1%

Հայտնի անձանց ընտանիքի անդամ	3	1%	0	0%	0	0%	0	0%	0	0%	3	0.4%
Լուսավոր Հայաստան կուս.	2	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	2	0.3%
Ռեֆորմիստների կուս.	2	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	2	0.3%
ՀՀ նախագահ	2	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	2	0.3%
Բարգավաճ Հայաստան կուս.	1	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	1	0.1%
Քաղաքացու որոշում կուս.	0	0%	1	17%	0	0%	0	0%	0	0%	1	0.1%
Կոմունիստական կուս.	1	0%	0	0%	0	0%	0	0%	0	0%	1	0.1%
Ընդամենը	**591**	**100%**	**6**	**100%**	**22**	**100%**	**20**	**100%**	**2**	**100%**	**641**	**100%**

Կենտրոն ՀԸ/ Ով է խոսել	**Էպիկենտրոն**		**30 րոպե Միքայել Մելքումյանի հետ**		**Press կենտրոն**		**Առանց կարծրատիպերի**		**Ընդամենը**	
Քաղաքացի	143	32%	0	0%	1	6%	0	0%	144	30%
Փորձագետ/ՀԿ ներկայացուցիչ	79	18%	5	45%	5	31%	2	50%	91	19%
Ոչ քաղաքական գերատեսչություն/ ընկերություն	36	8%	0	0%	1	6%	0	0%	38	8%
Պետական կառույց	30	7%	0	0%	2	12%	0	0%	32	7%
Քաղաքացիական պայմանագիր կուս.	27	6%	0	0%	0	0%	0	0%	27	6%
Մշակութային գործիչ	25	6%	0	0%	0	0%	0	0%	25	5%
Հայաստան խմբակցություն	23	5%	1	9%	0	0%	0	0%	24	5%
Բարգավաճ Հայաստան կուս.	24	5%	0	0%	0	0%	0	0%	24	5%
ՀՀ վարչապետ	19	4%	0	0%	0	0%	0	0%	19	4%
Պատիվ ունեմ խմբակցություն	12	3%	1	9%	2	12%	0	0%	15	3%
ՏԻՄ	11	2%	0	0%	0	0%	0	0%	11	2%
Եկեղեցի	4	1%	0	0%	0	0%	0	0%	4	1%
5165 կուս.	3	1%	0	0%	1	6%	0	0%	4	1%
Լուսավոր Հայաստան կուս.	0	0%	1	9%	2	12%	0	0%	3	0.6%
Առանձին հաս./քաղ. գործիչ	0	0%	2	18%	0	0%	0	0%	2	0.4%
ՀՀ ՄԻՊ	2	0%	0	0%	0	0%	0	0%	2	0.4%
Ազգային փոքրամասնության ներկայացուցիչ	2	0%	0	0%	0	0%	0	0%	2	0.4%
Ինքնիշխան Հայաստան կուս.	1	0.2%	0	0%	0	0%	0	0%	1	0.2%
Ռեֆորմիստների կուս.	0	0%	1	9%	0	0%	0	0%	1	0.2%
Հայ կառուցողական կուս.	0	0%	0	0%	1	6%	0	0%	1	0.2%
Ապրելու երկիր կուս.					1	6%			1	0.2%
Հայտնի անձանց ընտանիքի անդամ	1	0.2%	0	0%	0	0%	0	0%	1	0.2%
Ընդամենը	**443**	**100%**	**11**	**100%**	**16**	**100%**	**2**	**100%**	**472**	**100%**

Երկիր Մեդիա ՀԸ **Ով է խոսել**	**Երկիրն այսօր**		**Երկրի հյուրասրահ**		**Ընդամենը**	
Հայաստան խմբակցություն	114	41%	22	46%	133	38%
Փորձագետ/ՀԿ ներկայացուցիչ	57	19%	1	25%	69	20%
Քաղաքացի	19	6%	8	16%	26	7%
Պետական կառույց	15	5%	0	0%	15	4%
ՏԻՄ	13	4%	0	0%	13	4%
Պատիվ ունեմ խմբակցություն	14	5%	1	0%	13	4%
ՀՀ վարչապետ	10	3%	0	0%	10	3%
Ոչ քաղաքական գերատեսչություն/ընկերություն	9	3%	0	0%	9	3%
Ապրելու երկիր կուս.	5	2%	2	4%	7	2%
5165 կուս.	4	1%	2	4%	6	2%
Մշակութային գործիչ	5	2%	1	0%	5	1%
Բարգավաճ Հայաստան կուս.	4	1%	0	0%	4	1%
Առանձին հաս./քաղ. գործիչ	3	1%	1	2%	4	1%
Քաղաքացիական պայմանագիր կուս.	3	1%	0	0%	3	1%
ՀՀ ՄԻՊ	2	1%	0	0%	2	1%
Զարթոնք կուս.	1	0%	0	0%	1	0%
Հայաստանի դեմոկրատական կուս.	1	0%	0	0%	1	0%
Հայտնի անձանց ընտանիքի անդամ	0	0%	1	2%	1	0%
Ընդամենը	**279**	**93%**	**49**	**100%**	**328**	**94%**

Ֆրինյուզ ՀԸ **Ով է խոսել**	**Ազատ լուրեր**		**Ազատ զրույց**		**Ընդամենը**	
Պետական կառույց	86	100%	0	0%	86	29%
Քաղաքացիական պայմանագիր կուս.	56	85%	10	48%	66	23%
ՀՀ վարչապետ	31	100%	0	0%	31	11%
Փորձագետ/ՀԿ ներկայացուցիչ	21	75%	7	33%	28	10%
Ոչ քաղաքական գերատեսչություն/ ընկերություն	26	100%	0	0%	26	9%
ՏԻՄ	14	100%	0	0%	14	5%
Քաղաքացի	8	100%	0	0%	8	3%
Մշակութային գործիչ	7	100%	0	0%	7	2%
Հայաստան խմբակցություն	9	100%	0	0%	9	3%
Լուսավոր Հայաստան կուս.	4	100%	0	0%	4	1%
Քրիստոնեա-ժողովրդավարական կուս.	0	0%	2	9%	2	0.6%
Առանձին հաս./քաղ. գործիչ	1	50%	1	5%	2	0.6%
ՀՀ ՄԻՊ	2	100%	0	0%	2	0.6%
Եկեղեցի	2	100%	0	0%	2	0.6%

ՀՀ նախագահ	2	100%	0	0%	2	0.6%
Պատիվ ունեմ խմբակցություն	1	100%	0	0%	1	0.3%
Հանրապետություն կուս.	0	0%	1	5%	1	0.3%
Հայտնի անձանց ընտանիքի անդամ	1	100%	0	0%	1	0.3%
Ընդամենը	**271**	**100%**	**21**	**100%**	**292**	**100%**

Աղյուսակ 7. Օնլայն ԶԼՄ-ների տաղավարային հարցազրույցների ընթացքում քննարկված թեմաներ (10.04-10.05, 2022)

ԶԼՄ	**Թեմա**																
	Ղարաբաղյան հակամարտություն/անվտանգություն/բանակ	**Կյանքը Արցախում**	**Ռուս-ուկրաինական պատերազմ**	**ՀՀ ներքին խնդիրներ**	**Արտաքին քաղաքական խնդիրներ**	**Իրավական/դատական խնդիրներ**	**Իրավունքներ/ազատություններ/մեդիա**	**Տնտեսական**	**Սոցիալական**	**Սփյուռք**	**Առողջապահություն**	**Միգրացիա**	**Կրթություն/գիտություն**	**Եկեղեցի**	**Մշակույթ**	**Այլ խնդիրներ**	**Ընդամենը**
1in.am	211	12	28	127	162	20	16	31	0	20	0	3	16	4	5	6	661
	32%	2%	4%	19 %	24%	3%	2%	5%	0%	3%	0%	0.4%	2%	0.6%	0.7%	1%	100%
Freenews.am	3	0	1	1	1	0	0	1	0	0	0	0	0	0	0	1	8
	37%	0%	12.5%	12. 5%	12.5%	0%	0%	12.5 %	0%	0%	0%	0%	0%	0%	0%	12.5%	100%
Hraparak.am	38	0	5	27	3	4	3	2	0	0	0	0	2	0	0	1	85
	45%	0%	6%	31 %	4%	5%	4%	2%	0%	0%	0%	0%	2%	0%	0%	1%	100%
Factor.am	87	0	19	53	18	20	7	4	4	0	7	0	9	0	5	16	249
	35%	0%	7.6%	21 %	7%	8%	3%	1.6%	1.6%	0%	3%	0%	4%	0%	2%	6%	100%
Civilnet.am	25	1	10	12	11	5	8	14	4	4	4	0	10	1	2	1	112
	22%	1%	9%	11 %	10%	4%	7%	12%	3.5%	3.5%	3.5%	0%	9%	1%	2%	1%	100%
Ընդամենը	364	13	63	220	195	49	34	52	8	24	11	3	37	5	12	25	1115
	33%	1%	6%	20 %	17%	4%	3%	5%	1%	2%	1%	0.3%	3%	0.4%	1%	2%	100%

Աղյուսակ 8. Հեռուստաընկերությունների տաղավարային հարցազրույցների ընթացքում քննարկված թեմաները
(10.04-10.05, 2022)

ԶԼՄ	Թեմա																
	Դարաբաղյան հակամարտություն/ անվտանգություն/ բանակ	Կյանքը Արցախում	Ռուս-ուկրաինական պատերազմ	ՀՀ ներքին խնդիրներ	Արտաքին քաղաքական խնդիրներ խնդիրներ	Իրավական/դատական խնդիրներ	Իրավունքներ/ազատություններ/ մեդիա	Տնտեսական	Սոցիալական	Սկիզբոք	Առողջապահություն	Միգրացիա	Կրթություն/ գիտություն	Էկոլոգիա	Մշակույթ	Այլ խնդիրներ	Ընդամենը
Հանրային ՀԸ	81	3	13	42	26	48	37	24	12	10	6	2	13	1	6	5	329
	25%	1%	4%	13%	8%	15%	11%	7%	4%	3%	2%	1%	4%	0%	2%	2%	100%
5-րդ ալիք ՀԸ	51	0	2	34	10	5	6	1	1	1		3	2	1	1	1	119
	43%	0%	2%	29%	8%	4%	5%	1%	1%	1%	0%	3%	2%	1%	1%	1%	100%
Կենտրոն ՀԸ	10	1	0	11	5	0	1	5	0	0	0	0	2	0	1	0	36
	28%	3%	0%	30%	14%	0%	3%	14%	0%	0%	0%	0%	5%	0%	3%	0%	100%
Երկիր Մեդիա ՀԸ	25	2	1	32	5	3	0	4	0	0	0	0	0	0	0	2	74
	34%	3%	1%	43%	7%	4%	0%	5%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	3%	100%
Ֆրինյուզ ՀԸ	29	0	6	20	14	0	5	3	0	0	0	0	0	1	0	0	78
	37%	0%	8%	26%	18%	0%	6%	4%	0%	0%	0%	0%	0%	1%	0%	0%	100%
նդամենը	**196**	**6**	**22**	**139**	**60**	**56**	**49**	**37**	**13**	**11**	**6**	**5**	**17**	**3**	**8**	**8**	**636**
	31%	**1%**	**3%**	**22%**	**9%**	**9%**	**8%**	**6%**	**2%**	**2%**	**1%**	**1%**	**3%**	**0%**	**1%**	**1%**	**100%**